ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 98

«31» 08 2020թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի փետրվարի 10-ի N 10 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 54 հրամանով հաստատված 1-ին հավելվածի 1-ին բաժնի 2-րդ գլխում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) 3-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ 5» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ 4» բառերով,

2) լրացնել նոր՝ 3.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«

3.1	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ	1

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ